

ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Խաչատրյան Լուսինե Ավետիքի

ԸՆՏԱՆԻ ԿԵՆՏՐԱՆԻՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ

**Ժ.02.06 «ԱՄԻԱՅԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ. գ. թ., պրոֆեսոր Ա. Վ. Սաֆարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ.գ.դ, պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան
բ. գ. թ. Ն. Ռ. Ասատրյան

Առաջատար կազմակերպություն ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. սեպտեմբերի 23-ին՝ ժամը 15.00- ին,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի
Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0015,
Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. հունիսի 20-ին:

**Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար**

բ. գ. թ. դոցենտ Ն. Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, աշխատանքի հիմնական մասը հանդիսացող երեք գլուխներից, եզրակացություններից, համառոտագրությունների ցուցակից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ներածությունը և բոլոր գլուխները բաժանված են թվագրված համապատասխան ենթաբաժինների:

2. Թեմայի արդիականությունը

Ընտանի կենդանիների անվանումները, որոնք կազմում են թյուրքական լեզուների բնիկ բառաշերտի մի մասը, մինչ այժմ չեն ենթարկվել համապարփակ քննության: Այս լեզուներն անցել են պատմական փոխհարաբերությունների բարդ ուղի, որը լուսաբանելու և դրանց զարգացման միտումները հասկանալու համար կարևոր նշանակություն ունի բառապաշարային միավորների՝ տվյալ դեպքում տնտեսական նշանակության ընտանի կենդանիների անվանումների ուսումնասիրությունը: Ընտանի կենդանիների անվանումների վկայությունները վերաբերում են թյուրքական լեզուների պատմության ամենավաղ շրջանին, դրանց մի մասն էլ ընդհանուր է այթայան լեզվաընտանիքի որոշ լեզուների համար, որը կարևորվում է թյուրքական լեզուների բնիկ բառապաշարը որոշարկելիս:

Թյուրքական ժողովուրդների համար քոչվոր անասնապահությունը մշտապես եղել է կենցաղավարության հիմնական ձև, և այդ բնագավառին վերաբերող բառաշերտի քննությունը թույլ է տալիս ավելի լավ ճանաչել այս ժողովուրդներին, նրանց լեզվական ու մշակութային առանձնահատկությունները:

3. Աշխատանքի նպատակն ու խնդիրները

Ներկա ատենախոսության նպատակն է մասնավոր թեմատիկ խմբերի, տվյալ դեպքում՝ ընտանի կենդանիների անվանումների ուսումնասիրության միջոցով լուծել հետևյալ խնդիրները.

- որոշել թյուրքական լեզուների բաժանման կամ միաձուլման մոտավոր ժամանակագրությունը,
- գտնել մոնղոլական և այլ այթայան լեզուների հետ թյուրքական լեզուների ունեցած ընդհանրությունները,
- դիտարկել բառապաշարային տվյալ միավորների իմաստային և ձևաբանական զարգացումները,
- որոշարկել թյուրքական լեզվաընտանիքում առանձին խմբերի ընդհանուր ու տարբերակիչ հատկանիշները, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները,
- որոշարկել թյուրքական լեզուների և ոչ ազգակից լեզուների փոխհարաբերությունները և դրանց բառապաշարային ընդհանրությունների բնույթը,
- ատենախոսության գլխավոր նպատակներից է վեր հանել հին թյուրքական ընդհանուր բառապաշարը ժամանակակից թյուրքական լեզուներում և դրանցում առկա փոխառությունները:

4. Աշխատանքի գիտական նորույթը

Թյուրքական լեզուներում կենդանիների անվանումներին վերաբերող բառաշերտի ուսումնասիրությունը պայմանավորված է նախևառաջ այն հանգամանքով, որ թյուրքագիտության համար հրատապ է մնում թյուրքական լեզվաընտանիքի լեզուների միջև գոյություն ունեցող պատմական կապերի, ներքին ու արտաքին հարաբերակցությունների պարզաբանումը, որն էլ անհրաժեշտ է դրանց առավել դիպուկ և ճշգրիտ դասակարգման համար:

Այս աշխատանքում առաջին անգամ համատեղելով առանձին լեզուների և դրանց բարբառների կենդանիների անվանումների լեզվանյութը, փորձ է արվում կազմել համեմատաբար ընդգրկուն ցուցակ և դիտարկել ու քննարկել այն թյուրքական լեզուների ամբողջական համատեքստում:

Բազմաթիվ բառամիավորներ ենթարկվել են ստուգաբանական քննության, ներկայացվել է ողջ բառաշերտի իմաստային և ձևային բնութագիրը:

5. Աշխատանքի գործնական նշանակությունը

Թյուրքական լեզուների բառապաշարի առանձին թեմատիկ խմբերի հետազոտումը կարող է հիմք ծառայել տիպաբանական և պատմահամեմատական ուսումնասիրությունների, ինչպես նաև այդ լեզուների վերջնական դասակարգման համար: Բառակազմության տարբեր միջոցների և առանձնահատկությունների լուսաբանումը, ինչպես նաև փոխառյալ բառերի գործնական կիրառության գնահատականը հնարավորություն կընձեռեն հետագայում ընդգրկուն ընդհանրացումներ կատարել և հասկանալ թյուրքական լեզուների զարգացման միտումներն ու օրինաչափությունները: Թյուրքական ցեղերի բնակեցման և տեղաշարժման պատմական գործընթացները, նրանց կապերն ու փոխազդեցություններն անխուսափելիորեն արտացոլվում են լեզվի և հատկապես բառապաշարի մեջ, և սույն ատենախոսությունը կարևոր լեզվանյութ կարող է տրամադրել թյուրքալեզու ժողովուրդների ծագումնաբանության, ժողովրդագրական փոփոխությունների և պատմամշակութային ուսումնասիրության բնագավառում:

Թյուրքական լեզուների բառապաշարի իմաստային բաղարկման և բաժանման խնդիրների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն թյուրքագիտության, այլև թյուրքագիտության, այլ նաև մոնղոլական, տունգուսամանջուրական, ֆիննաուգրական լեզուների ուսումնասիրության և բառապաշարային ընդհանրությունների վեր հանման համար: Հայկական բարբառներում առկա թյուրքական փոխառությունների ուսումնասիրության համար ևս ատենախոսության շրջանակներում ներկայացված բառանյութն ունի կարևոր գործնական նշանակություն: Ատենախոսության նյութը կարող է օգտագործվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքական բաժնի մագիստրատուրայի համապատասխան դասընթացներում և ուսումնական ձեռնարկներում:

6. Աշխատանքի մեթոդաբանական հիմքը

Ատենախոսության մեջ զուգահեռաբար գործածվել են նկարագրական և պատմահամեմատական լեզվաբանության մեթոդները: Նշված մեթոդների զուգահեռ կիրառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ատենախոսությունը նպատակ է հետապնդում թյուրքական լեզուների ընտանի կենդանիների անվանումները դիտարկել համաժամանակյա և տարաժամանակյա տեսանկյուններից, բացահայտել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, համեմատել ցեղակից լեզուներում և բարբառներում առկա զուգահեռները:

7. Աշխատանքի ժամանակագրական սահմանները

Ներկա աշխատանքն ընդգրկում է թյուրքական լեզուների զարգացման պատմական բոլոր փուլերը, հատկապես ատենախոսության այն հատվածներում, որտեղ իրականացվել են մանրամասն պատմահամեմատական վերլուծություններ: Ժամանակագրական սահմանները ներառում են հին թյուրքական դարաշրջանից մինչև միջին և նոր, ինչպես նաև ժամանակակից թյուրքական լեզուներն ու բարբառներն ընկած ողջ ժամանակային դաշտը:

8. Աշխատանքի փորձաքննությունը

Ատենախոսության մի շարք դրույթներ և եզրակացություններ լուսաբանվել են ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետում հրատարակվող «Orientalia» ժողովածուի և «Իրան-նամե» հանդեսի, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հրատարակած «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», «Մերձավոր Արևելք» մատենաշարերի հատորներում, ինչպես նաև «Երիտասարդ արևելագետներ» և «Մախթում Կուլի» միջազգային գիտաժողովներում կարդացված զեկուցումներում: Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնում: Առանձին հիմնախնդիրներ քննարկվել են արտերկրյա մասնագետների և համապատասխան ոլորտների գիտնականների հետ:

10. Սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն

Ատենախոսության մեջ օգտագործվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, թուրքերեն ուսումնասիրություններ: Աշխատանքի «Սկզբնաղբյուրներ» ենթաբաժնում համառոտ կերպով անդրադարձել ենք թյուրքական լեզուների պատմության զարգացման փուլերին՝ նշելով այն գրավոր հուշարձանները, որոնց լեզվանյութը սկզբնաղբյուրային նշանակություն է ունեցել ատենախոսության համար:

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Ներածական մասում հիմնավորված են թեմայի արդիականությունը, կարևորությունը, նորույթը, նպատակն ու խնդիրները:

Թյուրքական ժողովուրդների անասնապահության հին ավանդույթներն արտացոլող բառապաշարը կազմում է սույն ուսումնասիրության առարկան: Աշխատանքի համար ընտրվել է տնտեսական նշանակության ընտանի կենդանիների անվանումների բառապաշարային թեմատիկ խումբը, որը թույլ կտա վերհանել թյուրքական համապատասխան բառաֆոնդի հնագույն շերտերը՝ բացահայտելով դրանց փոխադարձ կապը ինչպես ժամանակակից թյուրքական, այնպես էլ ոչ թյուրքական լեզուների հետ:

Ներածական բաժնում մանրամասն ներկայացվել է նաև սկզբնաղբյուրների և օգտագործված գրականության տեսությունը:

ԳԼՈՒԽ I

Հին թյուրքական (Քրոքթյուրքական) և Գարախանյան ժամանակաշրջանների հուշարձաններում վկայված ընտանի կենդանիների անվանումները և դրանց բառակազմական առանձնահատկությունները (1.1-1.5 ենթագլուխներ)

Առաջին գլուխը նվիրված է 8-13-րդ դդ. հուշարձաններում ընտանի կենդանիների անվանումների վկայություններին, դրանց լեզվական և բառակազմական առանձնահատկություններին:

1.1 Թյուրքական լեզուների բառակազմական առանձնահատկությունները

Այս ենթագլխում ներկայացված են թյուրքական լեզուները ալթայյան լեզվաընտանիքի համատեքստում: Դիտարկելով դրանց ներքին փոխհարաբերությունները՝ տարբերակել ենք գոյություն ունեցող ընդհանուր օտիպաբանական հատկանիշները, որոնք միևնույն ժամանակ զատում են դրանք հնդեվրոպական և դասական այլ լեզուներից: Թյուրքական լեզուների բառակազմության սկզբունքներն են՝ ածանցում, բառաբարդում և պատճենում: Գոյական անունների բառակազմությունը տեղի է ունենում հետևյալ եղանակներով. 1) *ձևաբանական*. այն իրականացվում է ածանցման միջոցով (*az-* կրտել + *-ma* բայանվանական վերջ. + *-n* կրավորական սեռի ցուցիչ, օր.՝ *azman* «կրտված ձի»), 2) *շարահյուսական* բառահիմքերի համադրման եղանակ (օր.՝ թուրքերենում *keçi koyun* մանր եղջերավոր կենդանիներ հավաքական իմաստով, *at ajeir* «բռցի.՝ ձի-հովատակ, հիմնական իմաստը՝ երամակ», *yp̄ȳñ c̄yp̄ȳk* «բռցի.՝ սպիտակ հոտ, այսինքն՝ երամակ» և *xapa c̄yp̄ȳk* «բռցի.՝ սև հոտ, հիմնական իմաստը՝ խոշոր եղջերավոր կենդանիների նախիր», *at mat* «տարբեր ցեղատեսակի ձիերից կազմված խառը երամակ»), 3) *շարահյուսական-ձևաբանական եղանակ*, (օր.՝ *jilkünün kambarataşı* «ընտիր ձի (արտահայտված է գոյականների կապակցման առաջին եղանակով *birinci tamlama*)» և այլն), 4) *հնչյունաբանական եղանակ*՝ իրականացվում է հնչյունափոխության միջոցով (օր.՝ *aba* «խոշոր եղջերավոր կենդանի կամ ընտանիքի հայր», *ebe* «կով կամ ընտանիքը կերակրող մայր, քույր» և այլն):

Հաջորդ ենթագլուխներում («*Ոչխարների և այծերի անվանումներ*», «*Ձիերի անվանումներ*», «*Խոշոր եղջերավոր և երկկճղակյանի կենդանիների անվանումներ*», «*Խոզերի անվանումներ*») քննության են ենթարկվել հին թյուրքական և կարախանյան շրջանի հուշարձաններում վկայված ընտանի կենդանիների անվանումները: Վաղ շրջանի հուշարձաններում ընտանի կենդանիները քիչ են ներկայացված, դրանցից առավել հաճախ հանդիպում են ձիերի անվանումները: Վկայված անվանումները կա՛մ բառարմատներ են (օր.՝ *at, koñ*), կա՛մ ածանցավոր բառեր (օր.՝ *adyir/ayyir*): Տարիքային կամ սեռային տարբերություններ արտահայտող բառերը նույնպես շատ չեն և վերաբերում են տնտեսական արժեք ունեցող կենդանիներին: Դրանք կարող են արտահայտված լինել կա՛մ շարահյուսորեն (օր.՝ *irkäk buzayu* «ցիկ»), կա՛մ որպես առանձին բառային միավոր (օր.՝ *adyir* «հովատակ», *kisrak* «զամբիկ»): Նշենք նաև, որ վկայված բոլոր անվանումներն այլթայիզմներ կամ բուն թյուրքական բառեր են: «*Ոչխարների և այծերի անվանումներ*» ենթաբաժնում քննարկված կենդանիների անվանումները հիմնականում վկայված են կարախանյան ժամանակաշրջանի ուլդուրակառուկական ավանդույթներ ունեցող գրական ստեղծագործություններում: Մահմուդ Քաշգարիի բառարանում առկա ոչխարների թույրը, մարմնակառուցվածքն ու այլ առանձնահատկություններ արտահայտող բնիկ ծագման եզրերի բազմազանությունը խոսում է այն մասին, որ արդեն 11-րդ դարում թյուրքական ցեղերն ունեին զարգացած ոչխարաբուծություն և դրա վերաբերյալ հարուստ եզրաբանություն:

«*Ձիերի անվանումներ*» ենթագլխում այդ կենդանիների անվանումների քննությունը ցույց է տալիս, որ ձիերը հիշատակված են դեռևս ամենավաղ շրջանի հին թյուրքական հուշարձաններում: Որոշ անվանումներ, որոնք նախապես ունեցել են ընդհանուր տեսակային իմաստ, օր.՝ *yilki* «կենդանիներ, նախիր, հոտ, ցեղական ձիեր, մանր եղջերավոր անասուն, երամակ», *yont* «երամակ, տարբեր կենդանիների հոտ» և այլն, հետագայում իմաստային նեղացում ստանալով՝ ձեռք են բերում որևիցե առանձնյակի նշանակություն, օր.՝ *yond* «երամակի մեջ ապրող զամբիկ», *yonda* «զամբիկ», *yilki* «ձի»: Որոշ անվանումներ էլ սկզբում վերաբերել են միայն ձիերին, իսկ հետագայում կիրառվել են նաև այլ կենդանիների կամ երևույթների համար:

«*Խոշոր եղջերավոր և երկկճղակավոր կենդանիների անվանումներ*» ենթագլխում բառամիավորների լեզվաբանական քննությունը ցույց է տալիս, որ այս խմբում նույնպես գերակշռում են բուն թյուրքական անվանումները, որոնցից շատերը զուգահեռներ ունեն այլթայան այլ լեզուներում, հին թյուրք. *irkäk bozayu* «ցիկ», *buzagu/puzagu* «հորթ», հմմտ.՝ մոնղ. *бырагу/бярүү*, բուրյաթ. *бырүү*, կալմ. буюу:

«*Խոզերի անվանումներ*» - Թյուրքալեզու ժողովուրդները քոչվոր կենսակերպի կենցաղավարման պայմաններում հնարավորություն չեն ունեցել զարգացնելու անասնապահության խոզաբուծական ճյուղը, որն էլ իր հերթին ենթադրում է այս ճյուղին վերաբերող սակավ եզրաբանություն: *Toñuz < domuz* բուն թյուրքական անվանումը տարածված է արևմտադիչադական և հարավարևմտյան օղուզական լեզուներում: Ուլդուրերենում, կարակալպակերենում, նոդայերենում և

որդգերենում *donuz* և *çoçka* բառերը հավասարապես կիրառվում են որպես հոմանիշներ, սակայն ոչ մի լեզվում տարվա կենդանակերպերով օրացույցում «խոզի տարին» *çoçka* բառով արտահայտված չէ, չնայած որ մի շարք լեզուներում այն հանդես է գալիս որպես խոզի հիմնական անվանում:

ԳԼՈՒԽ II

Ղիչաղերեն և չաղաթայերեն, խորեզմյան, հին անատոլիական և օսմանյան թուրքերեն լեզուներում վկայված եզրեր (ենթազյուխեր 2.1-2.4)

Երկրորդ գլխում բառագիտական քննության ենք ենթարկել միջնադարյան թուրքական գրավոր հուշարձաններում վկայված ընտանի կենդանիների անվանումները: Այս շրջանի (13-15դդ.) հուշարձաններում հստակ տեսանելի են օղուգաթուրքմենական և ղիչաղական բարբառներին բնորոշ լեզվական առանձնահատկությունները՝ արտահայտված նաև կենդանիների անվանումներում, օր.՝ *Kitab-ı Mecmû-i Tercüman-ı Türki-i ve Acemî ve Mogolî* բառարանում վկայված կենդանիների անվանումներն արտացոլում են ղիչաղերենի հնչյունական տարբերությունները, օր.՝ *keşek* «երկու տարեկան ուղտի ձագ» (հմմտ.՝ օղուգ. բրբռ.՝ *köşek* «ուղտի ձագ», մամլուքյան ղիչղ. *köşek/keşek* «մեկ տարեկան կամ վեց ամսական ուղտի ձագ»): Որոշ անվանումներ էլ այս շրջանում ենթարկվում են ոչ միայն հնչյունական, այլ նաև իմաստային փոփոխության, օրինակ՝ վաղ հուշարձաններում վկայված հին թուրքական *ud/uy* «խոշոր եղջերավոր կենդանի» անվանումը միջնադարյան հուշարձաններում վկայված է *ud<uy* հնչյունական տարբերակով և «ցուլ» կամ «եզ» իմաստներով: **«Ոչխարների, այծերի անվանումներ»** ենթազյուխում մանրամասն քննության են ենթարկվել մանր եղջերավոր կենդանիների անվանումները: Վաղ միջնադարում, չնայած որ առկա են որոշ փոխառություններ, այնուամենայնիվ վկայված անվանումները մեծ մասամբ բուն թուրքական են: Սակայն ուշ միջնադարում, երբ պատմամշակութային հասարակական փոփոխությունների արդյունքում ուժեղանում է արաբերենի և պարսկերենի ազդեցությունը, արաբապարսկական փոխառությունները զգալիորեն ավելանում են թուրքական բառապաշարում: **«Ձիերի անվանումներ»** ենթազյուխում քննարկված եզրույթներում առկա են և՛ արաբական, և՛ պարսկական փոխառություններ, օրինակ՝ *axta* «կուրտ ձի» (13-րդ դարից ոչ շուտ փոխառված իրանական ծագման բառ է): Բառապաշարային փոխառյալ միավորների ներթափանցումը գնալով առավել ինտենսիվ է դառնում դասական օսմաներենի շրջանում (*Klasik Osmanlı Türkçesi*): Այդ ազդեցությունից չի խուսափել նաև քննարկվող բառապաշարային թեմատիկ խումբը: Օսմաներենով ստեղծված գրականության մեջ նշանակալի տեղ են զբաղեցնում ձիերին ձոնված *rahşiye* կոչվող բանաստեղծությունները, որտեղ գովերգում էին դրանց ուժը, գեղեցկությունը և նույնիսկ արդուգարդը (*rahş* < իր. «գեղեցիկ քայլքով ազնվացեղ ձի»): Հանգավորված այս ստեղծագործություններում հաճախ են կիրառվել *edhem* «սևաթույր ձի», *serkes* «համառ ձի», *tekâver* «արագավազ, ուժեղ ձի» և շատ այլ արաբապարսկական փոխառություններ: Հաջորդ **«խոշոր եղջերավոր և երկկճղակավոր կենդանիների անվանումներ»** ենթազյուխում բառագիտական

քննության ենք ենթարկել նշված դասերին պատկանող ընտանի կենդանիների անվանումները: Այս խմբում փոխառյալ անվանումները կիրառելի են այն կենդանիների համար, որոնց դերն ու նշանակությունը թյուրքալեզու տվյալ ժողովրդի կենցաղավարման մեջ քիչ նշանակալի է: Դիցուկ գոմեշի անվանումը. *ղիչղ. gamus* «ասիական գոմեշ», *camış* օղուգ: Այս բառածը կապված է պարսկական և իրանական լեզուների ու բարբառների մեծամասնության մեջ գործածվող *gāv* «կով» բառի հետ: Այս կենդանու մեկ այլ անվանումը նույնպես պարսկական փոխառություն է՝ *mānda*, իսկ թյուրքական *su sigiri/su öküzi* (բոց, ջրային կով/ջրային ցուլ) ձևաբանական-շարահյուսական եղանակով կազմված անվանումները քիչ կիրառելի են: **«Նոզերի անվանումներ»** ենթագլխում ներկայացված եզրույթների քննությունը ցույց է տալիս, որ արևմտաղիչադական լեզուներում շրջանառվող խոզի մեկ ընդհանուր անվանումը տարբերվում է միայն առաջնային *d/t* հնչյունների փոփոխությամբ, օրինակ՝ կբալկ., կկում. *тоңуз*, կում. *доңуз*, կթաթ. *ДОМУЗ* «խոզ»: Որոշ լեզուներում գուգահեռաբար կիրառվում է *çoçka* անվանումը հնչյունական համապատասխան տարբերակներով, մի խումբ լեզուներում էլ խոզի անվանումներից կիրառվում է միայն *чoчкa* բառը տվյալ լեզվին հատուկ արտասանությամբ: Կեդանակերպերի ցիկլային օրացույցում խոզի տարին բոլոր թյուրքական լեզուներում անվանվում է *доңуз* բառով, եթե նույնիսկ տվյալ լեզվում որպես հիմնական անվանում կիրառվում է *чoчкa* տարբերակը: Բոլոր նշված անվանումներից հուշարձաններում վկայված է միայն *domuz* տարբերակը, որը տարածված է հիմնականում արևմտյան և հարավ արևմտյան թյուրքալեզու արեալներում:

ԳԼՈՒԽ III

Ընտանի կենդանիների անվանումները ժամանակակից թյուրքական լեզուներում, դրանց ծագումը և շերտերը (ենթագլուխներ 3.1-3.5)

Այս գլխում ներկայացրել ենք ընտանի կենդանիների անվանումների պատմահամեմատական բնութագիրը՝ փորձելով որոշել, թե ժամանակակից թյուրքական լեզուների բառապաշարի ուսումնասիրվող թեմատիկ խմբում որքանով է պահպանվել բուն թյուրքական շերտը, ինչ փոխառություններ են տեղ գտել դրանց շարքում, ինչպիսի իմաստային և հնչյունական փոփոխությունների են ենթարկվել դրանք, և որ անվանումներն են ընդհանուր թյուրքական լեզուների կամ դրանց առանձին խմբերի համար: Ներկայացնելով անվանումների ձևային բնութագիրը՝ փորձել ենք կատարել նաև ստուգաբանական քննություն: **«Բնիկ շերտ»** ենթագլխում առանձնացրել ենք թյուրքական ծագման անվանումները, որոնք կազմում են բառապաշարային տվյալ խմբի ճնշող մեծամասնությունը: Այս շերտի կապակցությամբ պետք է նշել, որ դեռևս վաղ կամ միջնադարյան շրջանի հուշարձաններում վկայված շատ եզրեր պահպանվել են մինչ մեր օրերը: Որոշ բառանունների հնչյունաբանական կազմն ու բառակազմության եղանակը խոսում են այն մասին, որ դրանք նորաբանություններ են, որոնք առաջացել են ավանդական արտադրաճյուղերի զարգացումների կամ նոր ճյուղերի առաջացման արդյունքում: Դրանք առկա են թե՛ բարբառներում, թե՛ գրական լեզուներում, օր.

թուրք. բրբռ. *almaz* «ձագին կերակրել չցանկացող ոչխար կամ այծ», *ana davarı* թուրք. բրբռ. «էգ այծ, որը տրվում էր խնամողին պայմանով, որ վերջինս իրավունք ունի օգտվել միայն դրա կաթից, ուլերի տերը չէ և ետ պահանջվելու դեպքում պետք է անմիջապես վերադարձվի»:

Թյուրքական լեզուների բառապաշարում արտահայտված են վաղ և ավելի ուշ ժամանակաշրջանների շփումները տարբեր ժողովուրդների հետ: Ժամանակագրական առումով դրանք կարելի է բաժանել մինչիսլամական և հետիսլամական շրջանի, մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանի և նորագույն շրջանների: Ամենավաղ փոխառությունները, որ ներկայացված են մեր աշխատանքի **«Այլ փոխառություններ»** ենթագլխում, կատարվել են չինարենից և հնդեվրոպական լեզուներից: Չինական փոխառությունները, սակայն, բառապաշարային այս խմբում քիչ են: Դրանցից են օրինակ՝ *ma* «ձի» միավորը, որը պահպանվել է միայն սարը ուղղորեթեում և *չին.* < *ло-за* «մուգ դարչնագույն պիսակավոր ձի» անվանումից ծագող *alasa* փոխառությունը, որը դիչադական տարբեր լեզուներում ունի կրտած ձևու նշանակություն օր. բաշկ., կուլ., թաթ., դրիմյան թաթարերենի դիչադական բրբռ. *алаша*, նոդ., *аласа* «կրտած ձի»: Այլ լեզուներում հանդես է գալիս իմաստային տարբեր փոփոխություններով, օրինակ՝ դրդգ. բրբռ. *әләшә*, ուզբ. բրբռ. *алача* «ցածրահասակ փոքր ձի», չուվ. *лаша кәтәвбә, ут кәтәй* «ձիերի երամակ», ադրբ. *alasa* «նիհար, քնձռոտ ձի»: Հին փոխառությունների շարքին են պատկանում նաև հնդեվրոպական ծագման անվանումները, օրինակ՝ թոխարերեն *okso*- արմատից է ծագում օդուգական լեզուներում կիրառվող *öküz* «էգ» բառը: Հին հնդկերեն *dhena*- «կաթնատու կով» արմատից են ծագում թուրք. *dana*, « մի տարեկան հորթ», թուրքմ. *тана* «հորթուկ», հունգ. *tinó*, գազ. *еркек дана* «երկու տարեկան ցլիկ», չուվ. *тына*, կկալպ. *тана* «երկու տարեկան հորթուկ, ցլիկ», թաթ. *тына* «երկու տարեկան էգ հորթ», բաշկ. *тана үтез* «մեկ կամ երկու տարեկան ցլիկ», նոդ. *дана* «երկու տարեկան հորթ», ուզբ. *тана* «երկու տարեկան հորթ», ուզբ. բրբռ. «երկու տարեկան ցուլ» անվանումները: **«Մոնղոլական շերտ»** վերտառությամբ ենթագլխում քննվում են մոնղոլերենից կատարված փոխառությունները, որոնք հիմնականում հաստատուն տեղ են զբաղեցնում թյուրքական լեզուների բառապաշարում, օր. կկալպ., բաշկ., նոդ., թաթ., դազ. *arğımak*, ուզբ. *арғумок*, դրդգ., ալթ. *арғымақ* «արագավազ ցեղական ձի»: Մոնղոլական փոխառությունները շատ են հատկապես թուվիներենի ուղտաբուծական եզրաբանությունում, օր. թուվ. *буура* «բեղմնավորող ուղտ < մոնղ. *буура, буура* «զուգավորվող ուղտ»: Փոխառությունների մոնղոլական շերտում կան անվանումներ, որոնք չեն պահպանվել ժամանակակից լեզուներում, օր. Քաշղարիի բառարանում հիշատակված *tugrag/tuğrağ* անվանումը (պատերազմի ժամանակ խանի կողմից զինվորներին տրված, իսկ խաղաղ ժամանակ հետ վերցված ձի) դուրս է եկել կիրառությունից: **«Արաբական շերտ»** ենթագլխում ներկայացված փոխառությունները հիմնականում վերաբերում են հետիսլամական շրջանին: 10-րդ դարում, երբ արդեն գոյություն ունեին առաջին թյուրքական իսլամական պետությունը, կրոնի տարածման հետ զուգընթաց տարածվում է նաև արաբական գիրը, որն էլ իր հերթին հանգեցնում է արաբերենի ազդեցության ուժեղացմանը և փոխառությունների ավելի ակտիվ

ներթափանցմանը: Այս ազդեցությունից չի խուսափել նաև անասնապահական եզրաբանությունը: Հարկ է նշել, որ դրան առավել ենթակա էին միջինասիական լեզուները և հատկապես օսմաներենը, օրինակ՝ *Burak* < արաբ. *brk* արմատից, դիցաբանական թևավոր ձիու անվանում է, որի վրա Մուհամմեդը համարվել է երկինք, դրդեցրե՞նում կիրառվում է «ուժեղ վարգաձի» իմաստով, որոշ դարձվածքներում և եզրերում նաև գլխավոր բաղադրիչ է՝ *бурак ат* «հոգեհանգստի ժամանակ լրիվ հանդերձանքով նվիրաբերվող ձի», *кыз бурак* «սիրունատես աղջիկ», *жаш бурак* «վայելույ, բարեկազմ երիտասարդ», ուզբ. *бурок, боракі ўзогон от* «ձիերից ամենաարագավազը», կկալպ. *пырак* «լավ վազող ձի»: *Baytal* «*զամբիկ*» արաբական փոխառությունը հանդիպում է համեմատաբար ուշ շրջանի՝ 15-16-րդ դարերի հուշարձաններում և հատուկ է դիֆչադական լեզուներին: Օղուզական լեզուներից կիրառելի է աղբբեջաներենի Չեմբերեքի շրջանի բարբառում՝ *baytal* «սեռահասունության նշաններ ցույց տվող զամբիկ», իսկ գրական թուրքերենում և աղբբեջաներենում կիրառվում է նույն արմատից կազմված *baytar* բառը «անասնաբեյժ» նշանակությամբ: Թյուրքական լեզուներից *байтасун, байтас, байсан* ձևերով փոխառվել է մոնղոլական լեզուներ՝ «երեք տարեկան զամբիկ» նշանակությամբ: Արաբական *кѳr-* արմատից ծագող օսմաներեն *katar/kattar* «ուղտերի քարավան» բառի իմաստը ժամանակակից թուրքերենում ընդլայնվել է ստանալով «էշելոն, սանիտարական կամ ապրանքային գնացք, մեքենաների շարասյուն» նշանակությունը: Նույն արմատից է առաջացել նաև *qatir* «ջորի» (թուրքերեն *katir*) բառը: Սրանով հանդերձ արաբական փոխառությունների մեծ մասը չի պահպանվել ժամանակակից թյուրքական լեզուներում: **«Իրանական շերտ»** ենթազվիի քննության առարկան իրանական փոխառությունների շերտն է թյուրքական լեզուներում: Թյուրքական ցեղերը տնտեսական, մշակութային կապեր են ունեցել սողդերի և այլ իրանական ցեղերի հետ դեռևս Կենտրոնական Ասիայի թյուրքական խանությունների գոյության ժամանակաշրջանում: Այս հարաբերությունների արդյունքում անկասկած որոշ իրանական տարրեր ներթափանցել են հին թյուրքական լեզուներ (օր.՝ թուրք. բբբ. *gancık* «էգ ընտանի կենդանի» < սողդերեն *kanig* «կին», պրսկ. *kanīza/kenize* «երիտասարդ աղջիկ», հմմտ.՝ հյ. *knik, gnig*): Թյուրք-իրանական առավել սերտ փոխառությունները վերաբերում են վաղ միջնադարյան շրջանին, երբ թյուրքական ցեղամիավորումներն առաջին անգամ մտեցան Սասանյան Իրանի սահմաններին: 14-րդ դ. թյուրքական վաղ աղբյուրներում ու տեքստերում արդեն վկայվում են իրանական փոխառությունների առաջին նմուշները: Շփումների սերտացմանը զուգընթաց թյուրքական լեզուներում ու բարբառներում իրանական բառաֆոնոն ընդլայնվում է և ընդգրկում ավելի լայն արեալներ: Իրանական փոխառություն է օսմ. *asb/esb* «ձի» միավորը, որի օգտագործման ոլորտը ժամանակակից թյուրքական լեզուներում բավականին նեղ է: Ուլդուրերենի բարբառներում օգտագործվում է *āspi/āsp* ձևերով, ինչպես նաև կազմում է *āspi gōhār* բառակապակցությունը, որը նշանակում է «հարստություն»: Ուզբեկերենում կիրառվում է որպես շախմատային ֆիգուրի անվանում՝ *āspi yuriši* «քայլ ձիով», իսկ բանահյուսության մեջ օգտագործվում է *āspi kux* «արագավազ ձի», *āspi tozi* «կայտառ ձի» բառակապակցություններում: Հանդիպում է նաև դրդեբերնի

բարբառներում *espi* ձևով «ձի, ձիու տարի» նշանակությամբ, սակայն դիֆչադական լեզուներում վկայված չէ: *Beygir* բառը, կազմված իրանական *bār-* «բեռ» և *-gīr* < *gereftan* «վերցնել» բայի ներկայի հիմքից: Կիրառվում է միայն գազաուզերենում, ադրբեջաներենում և թուրքերենում: Ընդ որում այն գազաուզերենի ակտիվ բառապաշարից դուրս է մղել բուն թյուրքական *at* «ձի» անվանումը: Ժամանակակից լեզվում վերջինս հիշատակվում է միայն դիցաբանության մեջ, իսկ ակտիվ բառապաշարում ամրապնդվել է *ծեғир* անվանումը, որն ունի տնտեսության մեջ օգտագործվող ձիու իմաստ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության մեջ առաջ քաշված հարցերն ամփոփելով և հիմնական եզրակացություններն ի մի բերելով՝ կարելի է նշել, որ՝

1. Հնագույն ժամանակներից թյուրքալեզու ժողովուրդների գոյատևման հիմնական ձև հանդիսացող քոչվոր անասնապահությունը ապահովել է հարուստ և զարգացած համաթյուրքական անասնապահական եզրաբանություն: Հին թյուրքերի տնտեսության մեջ կարևորությամբ առանձնանում էին ընտանի կենդանիներից ձի, ուղտը, ոչխարը, այծը: Սրանց անվանումները մեծ մասամբ ընդհանուր են թյուրքական լեզուներից շատերի համար, մյուսներն էլ զուգաբանություններ ունեն մոնղոլական լեզուներում: Օրինակ՝ թյուրք. *at*, մոնղ. *адъ* (<*adaγγ/адууу адаγун*) «ձի», համաթյուրքական բառ է *buzagǰi* «հորթ» ձևը, հուշարձաններում արձանագրված հնչյունական այս տարբերակով պահպանվել է միայն թուրքերենում և դրա բարբառներում, մյուս բոլոր թյուրքական լեզուներում ենթարկվել է հնչյունափոխության, հմմտ.՝ մոնղ. *быраγ/бярүү, буруу* բուրյաթ.: Հետագայում թյուրքական ժողովուրդների տնտեսության մեջ օգտագործվող կենդանիների շարքը համալրվել է այլ կենդանիներով (եգնուղտ, գոմեշ) և համապատասխան բառապաշարով:
2. Թյուրքական և մոնղոլական լեզուներում առկա բազմաթիվ զուգաբանությունները վկայում են այն մասին, որ ընտանի կենդանիների անվանումների մի մասը պատկանում է դեռևս թյուրք-մոնղոլական լեզվական միասնության ժամանակաշրջանին, հմմտ.՝ հին թյուրք. *içki*, հին մոնղ. *ишиг* «այծ»: Հին թյուրքական հուշարձաններում՝ *ingek*, հին մոնղ. *ингэн* «կով, խոշոր եղջերավոր էգ կենդանի», հին թյուրք. *kısır*, հին մոնղ. *keüser*, մանջ. *кисари* «անպտուղ ոչխար», հին թյուրք. *koy(un)*, հին մոնղ. *xonin*, մանջ. *xonin*, թյուրք. *inek*, մոնղ. *ynᠮ(n)*, մանջ. *ixan*:
3. Կենդանիների անվանումներում դրսևորվում են դրանց ֆիզիկական սեռային, տարիքային, ֆիզիոլոգիական վիճակի առանձնահատկությունները, ծնի ժամանակաշրջանը, թույրը, նույնիսկ նրանց բնավորության գծերը և շատ այլ հատկանիշներ (օրինակ կկալպ. *köbiklengen at* «քրտնամախած ձի», թյուրք. *yabıtak at* «առանց թամբի ձի», *binicik* «վարգաձի» կամ «հեծնելու համար նախատեսված որևիցե կենդանի»: Անվանադրման այս սկզբունքները սկիզբ են առնում հին թյուրքական ժամանակաշրջանից և շարունակվում ժամանակակից թյուրքական լեզուներում ու բարբառներում: ***Մեքը տարբերակող անվանումներ.***

հին թյուրք. *tıstir* «ջնած եզ այծ», *baytal* «սեռահասունության նշաններ ցույց տվող զամբիկ»: Տվյալ դեպքում նշված եզրերն ունեն և՛ սեռային, և՛ ֆիզիոլոգիական վիճակ արտահայտող նշանակություն: Թյուրք. *titir* «էզ ուղտ», *titir bugrası* «արու ուղտ», *deke/ teke* «արու այծ», *sağlık* «էզ ոչխար, կթվող կենդանի»: ***Sarıhpıwajın jıwıwıw ցույց տվող անվանումներ.*** թյուրք. *çepiş* «վեց ամսական այծ», *toklı* «վեց ամսական գառ», թուրք. *şişek* «երկու տարեկան պարարտ գառ», թյուրք. *tadun* «տարին լրացած խոշոր եղջերավոր կենդանու ձագ», *taylak* բառը տարբեր թյուրքական լեզուներում համապատասխան հնչյունական տարբերակներով ընդգրկում է մեկից երկու տարեկան տարիքային խումբը, թուվին. *toylak* «երկու տարեկան ուղտ», ադրբ. բրբռ. *Dizman* «վեց տարեկան այծ»: ***Ֆիզիկական առանձնահատկություններ*** արտահայտող անվանումներ. օսմ. *besirek* «բրդոտ խոշոր բտած արու ուղտ», *besli* «բտած ոչխար», թուրք. բրբռ. *boduk* «կոտոռ շարդված կենդանի», դրդգ. *токол үй* «անպոզ կով», թյուրք. *tüleg yıldı* «ձմեռվա բուրդը թափած կենդանի», *ketki at* «մեջքը բարակ կողերը լայն ձի»: Կենդանու ***բուծման վայրը կամ բուծման հետ կապված անձը*** նունպես կարող է նրա անվանման համար աղբյուրը հանդիսանալ՝ *bühti* օսմ. «արու ուղտ» (ըստ ավանդույթի, պարսից թագավորներից Բուխտին, խաչասերելով արաբական և պարսկական ցեղատեսակները, ստացել է շատ պնդակազմ և դիմացկուն ուղտ, որիը և կոչել են նրա անունով): ***Թույրն արտահայտող անվանումները*** հատկապես շատ են ձիերի վերաբերյալ: Հատուկ եզրերով տարբերակվում են թույրի ամենանուրբ երանգներն անգամ՝ թուրք. *abras* «սպիտակ պուտերով ձի», թուրքմն. *doryja*, թուրք. *doru at* «գորշ դարչնագույն կամ կարմրավուն ձի»: Սրանցից շատերը կիրառվել են նախապես ձիերի համար, իսկ հետագայում վերագրվել են նաև այլ կենդանիների: Շատ բառեր էլ կենդանիներին առանձնացնում են ըստ մարմնի մասերի գույների կամ ինչ-որ նշանի: Օրինակ՝ թյուրք. *başga boz at* «ձակատին սպիտակ նշանով ձի» կամ *belâk* «ոտքերը պտավոր ձի», հին թյուրք. *çarpaz* «ձի, որի առջևի ձախ և ետևի աջ ոտքերը սպիտակ են, իսկ առջևի աջ և ետևի ձախ ոտքերը սև», թյուրք. *adgırak* «ականջները սպիտակ, մարմինը սև լեռնային այծ կամ ոչխար», ուզբ. բրբռ. *çalğılak*, չալ «չալ՝ պտավոր՝ պիսակավոր ուլ», ***Ֆիզիոլոգիական վիճակն*** արտահայտող բառեր՝ ուզբ. բրբռ. *tusak/tusağ* «ստերջ ոչխար», բաշկ. *бәрәс* «ծանրած ոչխար», թուրք. *azma* «ոչխար, որը ամորձիները վնասված լինելու պատճառով չի կարողանում բեղմնավորել կամ բեռնակիր կենդանի, որին, սակայն, երիտասարդ լինելու պատճառով դեռ չեն բեռնում» դրդգ. *beçel* «կրտած կենդանի», թյուրք. *azıgıg at* «սեղանատամները դուրս եկած ձի», թուրք. բրբռ. *almaz* «կենդանի (հիմնականում ոչխար կամ այծ), որը ինչ-ինչ պատճառներով հրաժարվում է կերակրել իր ձագին», դրդգ. *тарпақ* «տգեղ քայքայված ծուլ ձի», օսմ. *bedram* «մեծ գլխով համառ ձի»: ***Մեծ ժամանակաշրջանը*** մատնանշող անվանումները հատկապես շատ են բաշկիրերենում. *эрембай* «աշնանը ծնված գառ», *йязауыс* «գարնանը ծնված գառ», *йэйзаукә* «ամռանը ծնված ուլ», թուրքմն. բրբռ. *tokalak* «աշնանը ծնված գառ», թյուրք. *baldir gozi* «ժամանակից շուտ ծնված գառ»: *Bayrı guzi, barga guzi, bayzi guzi* թուրքմն. ընդհանուր գառների ծնից քիչ ավելի շուտ ծնված գառ, թաթ. *былтырғы бұзаяу*

«անցած տարում ծնված հորթ: Օրինակ՝ *көпәй, көбә, көрпәш*, դազ., *кәбә, көрпәй дәш* դազ. բրբռ. վաղածին գառ, *көпәш* կամ *көрпәш* ուշ ծնված գառ:

4. Թյուրքական լեզուներում ընտանի կենդանիները անվանելու ելակետերից է դրանց գործառական նշանակությունը: Հաճախ նման անվանադրությունը կիրառվում է միևնույն կենդանու դեպքում՝ ապահովելով դրա համար մի քանի անվանումներ, օրինակ՝ զագաուգերենում *beygir* կոչվում է տնտեսության տարբեր ոլորտներում աշխատող ձին՝ *araba beygiri* «սայլին լծվող ձի», *dermen beygiri* «ջրաղացի ձի», իսկ ահա «նժույզ» իմաստով, ինչպես նաև ձիու առասպելական նշանակությունը նշելու համար (հիմնականում բանահյուսության մեջ) ընդունված է *at* անվանումը:
5. Թյուրքական ժողովուրդների կենսակերպում տնտեսական նշանակության կենդանիների տեղն ու դերը հաճախ պատճառ է հանդիսացել, որ գործառական մակարդակում նույնացվեն մարդկանց և կենդանիներին տրվող անունները, այսպես օրինակ՝ հին թյուրք. *ebe* «ընտանիքը կերակրող կաթնատու կենդանի, ինչպես նաև՝ քույր, մայր», ժամանակակից թյուրքերենում միայն «տատմեր», ադրբ. *balax* նշանակում է «զավակ, երեխա», մինչդեռ այն ունի նաև «կենդանու կամ թռչնի ձագ» նշանակությունը; չադ. *uşak* բառը Ալիշեր Նավոյի ստեղծագործություններում վկայվել է «մանր-մունր ապրանք», նշանակությամբ, իսկ թյուրք. բարբառներում կիրառվում է «մանր եղջերավոր կենդանի», ադրբ. «երեխա» իմաստներով: Аргымак մոնղոլական փոխառությունը միջինասիական լեզուներում նշանակում է «զտարյուն ցեղական ձի», դազախերենում, սակայն, այն վերագրում են նաև բարձր սոցիալական դիրք ունեցող պատվարժան և հարուստ անձնավորության, բառերի կապն ակնհայտ է նաև թյուրք. *oğlaq* «ուլ, մատղաշ կենդանի» և *oğlan* «տղա երեխա» ձևերի դեպքում:
6. Եթե վաղ շրջանում մեկ բառային միավորը կարող էր տարբերակել կենդանու սեռը կամ տարիքը, ինչպես օրինակ Քաշգարիի բառարանում վկայված *tışek* «երեք տարեկան ոչխար», *tazun* «երկու տարեկան հորթ», *irkeç/erkeç* «երեք տարին լրացած արու այծ» եզրերը, ապա նոր շրջանում ընտանի կենդանիների անվանումները ներկայացված են առավելապես նկարագրողական բառակապակցություններով թուվ. *çedişken inek* «վեց տարեկան կով», ույղ. *эркек тай* «արու քուռակ», թյուրքմ. *дай аьт* «երիտասար ձի»: Դա վերաբերում է հատկապես երկու-երեք տարեկանից մեծ կենդանիներին, օրինակ՝ թուվ. *dönen teve* «երեք տարեկան ուղտ»: Տարբեր ժողովուրդներ կենդանիների տարիքը հաշվել են տարբեր կերպ. թուվացիները, մոնղոլների նման, նկատի են ունեցել նաև կենդանու սաղմնային ժամանակաշրջանը *bestig teve* թուվ. «չորս տարեկան ուղտ» (բոց. *bestig* հինգ տարեկան): Դրոզերենում և ուզբեկերենի որոշ բարբառներում ձիու տարիքը չորս տարեկանից հետո որոշել են սեղանատամներով՝ նշելով դրանց քանակը տվյալ տարիքին համապատասխան, եթե մեկ սեղանատամ, ապա՝ հինգ տարեկան ձի, օր.՝ դրդ. (ուզբ. բրբռ. *бир азув*) *бир асий, эки асий* (ուզբ. բրբռ. *йэк азув*) վեց տարեկան ձի, դրդ. *уч асий* (ուզբ. բրբռ. *уч азув*) յոթ տարեկան ձի: Երբեմն էլ կենդանու մատղաշ տարիքը և սեռային տարբերակում արտահայտող բառերը,

կիրառվելով միասին, կազմում են միաժամանակ և՛ տարիքային և՛ սեռային տարբերակումներ արտահայտող եզրեր. դրդ. *тай байтал* «մի տարեկան զամբիկ» (*тай* մի տարեկան մտրուկ, *байтал* զամբիկի ընդհանուր անվանում), *кунан байтал* երկու տարեկան զամբիկ (*кунан* երկու տարեկան քուռակ), *бышты байтал* երեք տարեկան զամբիկ (*бышты* երեք տարեկան քուռակ):

7. Երբեմն նույն անվանումը կարող էր ունենալ երկու կամ ավելի տարբերակում, որը հազվադեպ երևույթ է թյուրքական լեզուներում: *Bi/biye* դիֆչադական լեզուներին բնորոշ այս բառը դիֆչադական խմբի հյուսիս-արևմտյան խոսվածքներում սեռային նշանակության հետ մեկտեղ ունի նաև հստակ տարիքային սահմանափակում՝ *biye* «երեք տարին լրացած զամբիկ», դրդ. բրբռ. *дагир* ծեր՝ կուրտ ձի, ուզբ. բրբռ. *кунажин*, թուրքմ. բրբռ. *гьуноожун*, *кунайын/кунажын* «երեք տարեկան զամբիկ», դրդ. բրբռ. *гунажын* «երկու տարեկան զամբիկ», *тууча* «երեք տարեկան զամբիկ» (<*туу* «չճնած», <*туу* «բտած»):
8. Թյուրքական լեզուների բառապաշարում պատմական փոխհարաբերություններն արտացոլող երկու տիպի բառեր կան՝ ընդհանրացնող և տարբերակող: Հետազոտվող թեմատիկ խմբի եզրերի ձևավորումն անցել է կազմավորման բարդ ուղի, և դրանց հնչյունաբանական, իմաստաբանական, ինչպես նաև ձևաբանական առանձնահատկությունները կարող են թյուրքական լեզուները բաժանել լեզվական արեալների: Օրինակ՝ «ոչխար» բառի արմատը (*koy-*) աննշան հնչյունական փոփոխություններով համաթյուրքական է: Իսկ օղուզական լեզվախմբում այն հանդես է գալիս -սո ձևույթի հետ, որը հնում ունեցել է փոքրացուցիչ վերջածանցի նշանակություն: Մա ոչ թե առանձին բառապաշարային արեալ է, այլ ձևաբանորեն տարբերակվող լեզվական արեալ: Հարավարևմտյան լեզուներին բնորոշ *koyun* անվանումը ձևով նման է մոնղոլերենի և բուրյաթերենի *hōnin* «ոչխար» անվանմանը: «Ոչխար» բառի անվանումը հետաքրքիր արեալ է ստեղծում մերձվոլգյան թյուրքական լեզուների շրջանում: Այստեղ համաթյուրքական *koy*, *koyun* բառերը դուրս են մղվում՝ տեղը զիջելով մեկ այլ բառի. *թաթ. сарык*, բաշկ. *һарык*, չուվ. *сyrăх*: *Кой* բառի իմաստը թաթարերենում և բաշկիրերենում քիչ ավելի նեղացել է և նշանակում է «ոչխար» ոչ թե ընդհանուր առմամբ, այլ՝ միայն «դմակավոր ոչխար»: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ յակուտերենի *баран* (*тыһы бараан* էզ ոչխար) բառը ռուսերենից կատարված փոխառություն է: Այսպիսով, այնպիսի տարածված բնիկ թյուրքական անվանումը, ինչպիսին է *koy-ը*, նույնպես կարող է փոխարինվել օտար բառով: Այն հիմնական բաղադրիչ է սեռային տարբերակումներ ցույց տվող եզրերում. ուլդ. *эркэк кой* արու ոչխար, *ана кой* մայր ոչխար, թուրք. *dişi koyun* էզ ոչխար, *er koyun* արու ոչխար: Գրեթե բոլոր թյուրքական լեզուներում որպես «արու ոչխար» հանդես է գալիս հին թյուրքական *qoçnar* բառը: Օղուզական լեզուներում (թուրք., թուրքմ., ադրբ., գազ.) ավելի կիրառելի են այս բառի կրճատ ձևերը. *koç/goç/ğoç*: Գազաուզերենում այն ունի նաև «վայրի խոզ» իմաստը, իսկ «արու այծ» *koç keçi* բառակապակցությունում ծառայում է որպես սեռային տարբերակիչ: Պատմական փոխհարաբերությունների բարդ ուղի են ներկայացնում նաև կովի

անվանումները: Առանձին խումբ են կազմում դիչադակյան լեզուները, որոնցում կիրառվում է *sifir* անվանումն իր հնչյունական տարբերակներով. դագ., կկալպ., նոդ., թաթ. *сыйыр*, բաշկիրերեն՝ *һыйыр*: Միննույն ժամանակ այս անվանումը կիրառվում է այնպիսի լեզուներում, որոնք բավական տարբեր են դիչադակյաններից ուզբ. *сигир*, ուլդ. *сийир*, գագ. *сыыр*, թուրքմն. *сығыр*: *Ийнек* անվանումը տարածված է սիբիրյան և հարավարևմտյան խմբի լեզուներում. թուրք., գագ. *inek*, ադրբ. *inək*, թուվ. *инек*, խակ. *инек*, յակ. *ынах*, չուվաշ. *ене*: Որոշ լեզուներում հավասարապես կիրառվում են երկու բառն էլ. արևմտադիչադակյան լեզուներում՝ կրալկ. *ийнек/сыйыр*, կթաթ. *ийнек/сығыр*, կարաիմ. *сығыр/ийнек*, կում. *сыйыр/ийнек*, կկում. *сығыр/ийнек*: Դրոզերենում և այլայերենում կիրառվում է *ud<uy* անվանումը: Այս անվանումներից միայն *inek* և *ud* բառերն են, որ վկայված են վաղ հուշարձաններում: Մահմուդ Քաշղարիի բառարանում հանդիպում է *sifir* անվանումը «կով» իմաստով, որը խոսում է այն մասին, որ այն հատուկ էր արևմտյան խմբի լեզուներին: Ժամանակակից թուրքերենում նույնպես այն կիրառվում է, սակայն «խոշոր եղջերավոր կենդանի» նշանակությամբ:

9. 8-9 դդ. թյուրքական հնագույն գրավոր օրխոնաենիսեյան հուշարձաններում վկայված կենդանիների անվումները (*adfir* «հովատակ», *tay* «մտրուկ», *azman* «կուրտ ձի», *at*, *merin* «ձի»), այժմ էլ լայն տարածում ունեն ժամանակակից թյուրքական լեզուներում: Դրանցից մի քանիսը կրել են որոշակի իմաստային փոփոխություն: Օրինակ՝ *yilk* «երամակ, ցեղական ձիեր» միավորը ենթարկվել է հետևյալ իմաստային զարգացման, կիրառվելով որևիցե կենդանու անվան հետ, նշանակել է այդ կենդանու նախիրը կամ հոտը և հետագայում պահպանել միայն դրա նեղ տեսակային «ձի» իմաստը: Նույնը կարելի է ասել նաև *yont* բառի համար (*yund/yunt* «երամակ», «ձի», *jond* «երամակի մեջ ապրող զամբիկ», *jonda* «զամբիկ»):
10. 8-13 դդ. ուսումնասիրվող թեմատիկ խմբի բառաֆոնդը թեև մեծ մասամբ գուտ թյուրքական էր, սակայն այս շրջանում արդեն հանդիպում են գրավոր կերպով ամրագրված փոխառություններ, որոնց հնչյունական կազմը խոսում է այն մասին, որ դրանք չինարենից, մոնղոլերենից (*alaša* «ձի», *quba* «դարչնագույն կամ բաց դեղնավուն ձի») կամ հնդիրանական լեզուներից (*čepiš* «այծ», *düve* «ուղտ», *öküz* «եզ», «ցուլ», *tana* «հորթ» և այլն) կատարված վաղ շրջանի փոխառություններ են: 13-դ. թյուրքական լեզուների ճյուղավորման գործընթացում առաջացած լեզվական և բարբառային համայնապատկերին զուգընթաց տեղի ունեցավ թյուրքական բնիկ բառապաշարի արտասանական և հնչյունաբանական հարմարեցում: Դա վերաբերում է նաև փոխառյալ բառապաշարին, որը, պայմանավորված պատմական մի շարք գործոններով, հարստանում էր:
11. Թյուրքական լեզուները պատմության ընթացքում շփման մեջ են եղել տարբեր լեզուների ու բարբառների հետ, որի հետևանքով փոխառյալ շերտերն ունեն համապատասխան աղերսներ այդ լեզվի հետ: Այսպես, սիբիրաալթայան արեալի լեզուներն անմիջականորեն շփվել են չինարենի, տունգուսամանջուրական, մոնղոլական և այլ լեզուների հետ, Կովկասի և

Ղրիմի թյուրքական լեզուները՝ իբերակովկասյան, սլավոնական, իրանական լեզուների և հայերենի հետ, միջինասիական լեզուները՝ իրանական և արաբական լեզուների հետ, և այլն: ԸՆդ որում, այդ փոխառությունները կարող են լինեն ուղղակի և միջնորդավորված, օրինակ՝ չինական փոխառությունները, որոնք շատ սահմանափակ են, և բացի ժամանակակից դիչադական լեզուներից (բաշկ., կուր., թաթ., նոդ., դրիմ. թաթ. դփչադ. բրբռ.) պահպանվել են նաև չուվաշերենում՝ *лаша*, դրդգ. բրբռ.՝ *элашэ* «մուգ դարչնագույն՝ պիսակավոր ձի», ուզբ. բրբռ.՝ *алаша* «ցածրահասակ փոքր ձի», ադրբ. *alaşa* «նիհար ձի»: Մարը ուլդուրերենում պահպանվել է *ma* «ձի» բառամիավորը, որ նույնպես չինական փոխառություն է: Մոնղոլերենի ազդեցությունը նկատելի է հատկապես սիբիրաալթայան լեզուներում և ուղտաբուծության ոլորտին վերաբերող բառերում:

12. Արաբական և իրանական փոխառությունները, որոնք քանակային առումով ամենաշատն են, ժամանակագրորեն վերաբերում են 14 դդ. դարին: Փոխառյալ այդ շերտը շոշափելի է միջինասիական լեզուներում և առավելապես՝ օսմաներենում: Այս շրջանի փոխառությունները քիչ են պահպանվել ժամանակակից լեզուներում և հաճախ էլ ենթարկվել են իմաստափոխության, օրինակ՝ *katar* «ուղտի քարավան» բառամիավորը ժամանակակից թուրքերենում ենթարկվել է իմաստափոխության և գուգահեռաբար նշանակում է «էշելոն, սանիտարական կամ ապրանքային գնացք, մեքենաների շարասյուն», իր. *asb* «ձի» միավորը, որը լայն գործածություն ուներ միջնադարում, դուրս է մղվել ժամանակակից լեզուների ակտիվ բառաֆոնդից և օրինակ՝ ժամանակակից ուզբերենում կիրառվում է միայն շախմատային խաղաքարը անվանելիս՝ *äspi yurisi* «քայլ ձիով», իսկ բանահյուսության մեջ օգտագործվում է *äspi küş* «արագավազ ձի», *äspi tozi* «կայտառ ձի» բառակապակցություններում, *espi* դրդգերենի բարբառներում՝ «ձի, ձիու տարի», ուլդուրերենի բարբառներում օգտագործվում է *äspi/äsp* ձևերով, ինչպես նաև կազմում է *äspi göhär* բառակապակցությունը, որը նշանակում է «հարստություն»:

13. Ընտանի կենդանիների անվանումներն ըստ կազմության լինում են պարզ կամ արմատական, ածանցավոր, բարդ: ա) Պարզ անվանումների օրինակներ են *qoñ<koi<koy* «ոչխար», «at» ոչխար: Պարզ բառարմատների պատմական վերականգնումը որոշ դեպքերում հանգեցնում է երկհնչյուն արմատի և ածանցների, օրինակ՝ *yor ~ jori~ jör~ jöri~ jörü~ jür~ jürü~ jürü* «գնալ, քայլել» *yorğa* at «շորորավարզ ձի», *jügür* «վազել», *jügürgen* at «լավ վազող ձի»: Այս բոլոր բառերը ծագում են *jo բայական արմատից, *yor-* արմատի -r բաղադրիչը, ինչպես նաև *jügür-* արմատի -gür-ը պատճառական սեռի վերջածանցներ են, իսկ -i վերջածանցը *jori* բայական արմատի կազմում գործողությունն ինտեսիվացնող ձևի ցուցիչ է. *jorıya* at «արագ վազող ձի»: Ժամանակակից լեզուներում բոլոր այս վերջածանցները կորցրել են իրենց նշանակությունը և այժմ հանդես են գալիս որպես պարզ հիմք: բ) Ածանցավոր անվանումներ, օրինակ՝ *sağlık* կթու կենդանի, *sağ-* կիթ + *-lık* «ինչ-որ բանի համար նախատեսված» իմաստ հաղորդող գոյականակերտ վերջածանց, *tokli* նորածին գառ, *tok-* ծնել + *-li*, *azman* - az- կտրել, քչացնել + *-ma* բայանվանական

վերջ. + -ո կրավորական սեռի ցուցիչ (azman կրտված ձի)) : գ) Բարդ անվանումներ, օրինակ՝ *sag*- արմատին կցելով *mal* (ընտանի կենդանի) բառը կազմվում է *caғmal* բարդ անվանումը, որը նույնպես նշանակում է «կյոռու կենդանի», *alapaça, ala- paça* : Բառակազմության շարահյուսական եղանակով ստեղծված անվանումներ, օրինակ՝ անվանական հիմքերի համադրությամբ ստեղծված բառակապակցություն-անվանումներ են, օրինակ՝ *keçi koyun* տարբեր մանր եղջերավոր կենդանիների հավաքական անվանում, *at ajfir* տարբեր տեսակի ձիերի երամակ, *ürün sürük* ձիու երամակ, *xara sürüg* «խոշոր եղջերավոր կենդանիների նախիր», ձևաբանական-շարահյուսական եղանակով կազմված բառակապակցություններ, օրինակ՝ *jilkının kambaratası* «ձիերից ամենաընտիրը», բառակապակցական անվանումներ *baklan kuzı* «խնամված թխվիկ գառ»:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Խաչատրյան Լ., «*Ձի*» բառի անվանումները թյուրքական լեզուներում», *Orientalia*, Երևան, 2008, պրակ VII-VIII, էջ 48-51:
2. Խաչատրյան Լ., «Ոչխարների անվանումները թյուրքական լեզուներում», *Orientalia*, Երևան, 2011, պրակ XII, էջ 177-188:
3. Խաչատրյան Լ., «Ղրղզերենի անասնապահական եզրաբանության շուրջ», *Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ*, Երևան, 2011, պրակ VII, էջ 103-110:
4. Խաչատրյան Լ., «Թյուրքական լեզուների ներքին փոխազդեցությունների շուրջ», *Օսմանագիտական հարցեր*, Երևան, 2011, պրակ VII, էջ 312-317:
5. Խաչատրյան Լ., «Իրանական շերտը ընտանի կենդանիների թյուրքական անվանումների մեջ», *Իրան-Նախե*, Երևան, 2010-2011, հտ. 42-43, էջ 28-30 (համահեղինակությամբ՝ Հ. Կիրակոսյանի):
6. Խաչատրյան Լ., «Ձիու թեմատիկան Բաքիի դիվանում», *Կանթեղ*, Երևան, 2012, 4(53), 40-46 (համահեղինակությամբ՝ Ա.Սարգսյանի):

Хачатрян Лусине Аветиковна

НАЗВАНИЯ ДОМАШНИХ ЖИВОТНЫХ В ТЮРКСКИХ ЯЗЫКАХ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности

10.02.06 "Древние и современные языки Азии (тюркология)"

Защита состоится 23-ого сентября 2013 года, 15. 00 часов, на заседании специализированного совета по лингвистике ВАК 019 действующего в Институте языка имени Гр. Ачаряна НАН РА и (адрес: Ереван 0075, ул. Г. Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Данная диссертация посвящена синхронному и диахроническому изучению названий домашних животных в тюркских языках, представляющих хозяйственную ценность. Семантико-морфологическое изучение отдельных лексем данной тематической группы, охватывающей как древний слой лексики, так и инновации более позднего времени, позволяют проследить внутренние закономерности развития тюркских языков, которые прошли сложный путь взаимодействий между собой и с другими языковыми семьями.

В современной тюркологии разные слои лексики исследованы неравномерно. По сравнению с другими языковыми категориями скотоводческая лексика осталась мало изученной и не подверглась системному структурно-семантическому анализу.

Во **Введении** определяется объект исследования, обосновываются актуальность темы, так же выдвинутые нами задачи и проблемы. Дается подробный критический анализ научной литературы по тематике.

Первая глава посвящена изучению названиям домашних животных, которые засвидетельствованы в письменных источниках древнетюркского и караханидского периодов. Большинство этих названий носит общетюркский характер, что отражает, по всей вероятности, общность тюркских языков и диалектов в древнюю эпоху, в которую формировалась скотоводческая терминология. Следует отметить, что характер соотношения различных наименований, входящих в тематические группы – общевидового наименования, наименований холостенного самца, самца-производителя, самки и молодняка – неодинаково. Указанные наименования могут иметь разные или одинаковые корни, причем в последнем случае разграничение осуществляется при помощи морфологии или посредством описания. В наиболее древних письменных памятниках преобладают названия лошади по возрасту и полу, например – айгӱр 'жеребец', байтал 'кобыла', тай 'жеребенок', но в письменных материалах караханидского периода засвидетельствованы названия животных, имеющих важное хозяйственное значение: бука 'бык-производитель', сӱгӱр 'корова', бузагӱ 'теленок', бугра 'бык – производитель', инӱн 'верблюдица', бота 'верблюжонок' и т.д.

Во второй главе подробному семантико-морфологическому анализу подверглись названия домашних животных средневековых источников. В этот период уже четко выявляются огузотуркменские, кыпчакские и карлукские языковые различия, которые также видны в изучаемой нами тематической группе лексики. Например: в *Kitab-ı Mecmû-i Tercüman-ı Türki-i ve Acemî ve Mogolî* названия животных отражают особенности кыпчакской фонологии - keşek ‘двухлетний верблюжонок’, ср. огуз. köşek ‘верблюжонок’ мамлук. кып. köşek/keşek верблюжонок от шести месяцев до одного года’. Однако характерные названия разных тюркских диалектов все еще параллельно засвидетельствованы в некоторых письменных памятниках (кон/кой/коч/койун/гойун). В тюркских языках в различные периоды времени происходил процесс перехода н>н, н>j, j>ч, чем и объясняется образование вариантов этих названий. Все указанные названия функционировали одновременно, как диалектные формы, а на уровне современных тюркских языков – это ареальные наименования одного животного. В средневековую эпоху так же наблюдаются семантические сдвиги в значениях разных слов. Например, в ранних памятниках старотюркское название *ud/уу* означает ‘крупный рогатый скот’, а в позднем средневековье замечены и фонологические, и семантические сдвиги - *ud<уü* “бык, вол”. В раннем средневековье, при наличии некоторых заимствований, все же большинство названий домашних животных имеют исконно тюркское происхождение. Однако, в более поздний период, когда в результате культурноисторических и социальных изменений усиливается арабо-персидское влияние, эти заимствования существенно увеличиваются в лексике тюркских языков.

Третья глава посвящена историко-семантическому описанию отдельных лексем животноводческой терминологии. В тюркских языках термины, обозначающие различные виды животных по полу, возрасту и по другим характерным признакам, многочисленны. Среди них выделяются несколько групп слов по степени распространения. Устойчивость или неустойчивость значения общего слова, так же, как и определенных лексико-семантических групп тесно связаны с историческими социальными условиями жизни народов-носителей этих языков. В ходе этимологических исследований была сделана попытка определить насколько сохранился древнетюркский слой в современных тюркских языках, наличие, сфера и степень употребления заимствований. Исконно тюркские названия составляют подавляющее большинство в данной тематико-лексической группе. Надо отметить, что еще в ранних и средневековых памятниках многие упомянутые термины сохранились до наших дней. Фонологический и морфологический состав некоторых наименований свидетельствуют о том, что это новообразования.

В заключительном разделе диссертации приводятся выводы и подводятся основные итоги работы. Возрастная характеристика в тюркских названиях домашних животных отличается четкостью, имеет массу местных конкретных особенностей и прослеживается до древнейшего времени. В тюркских языках все дифференциации в названиях животных осуществляются синтаксическими, лексическими и морфологическими способами. При синтаксическом способе для передачи

возрастной характеристики в наименованиях животных используется описательный прием, например, в материалах памятников письменности встречаются: *üç yaşar qoi* – трехлетняя овца, чаг., *tort yaşar qoi* – четырехгодовалая овца чаг., *beşyaşar qoi* пятилетняя овца. Для современных тюркских языков наиболее характерны названия, которые генетически восходят к заимствованным именам из персидского языка числительным-определителем: *панджь* – пятилетняя овца, *чорь* – четырехлетний баран, *чары* – двухгодовалая овца, так же из монгольского, для ограниченной группы домашних животных: *дөнөн* ‘лошадь (жеребец) трех-четырёх лет’, *дөнөјин* ‘кобылица трех-четырёх лет’. Самостоятельное лексическое обозначение холощенного самца имеют только наиболее важные в хозяйственном отношении домашние животные: *ахта*, *їгдїш*, *алаша* ‘холощенный конь’, *оғуз*, *чар*, *тазїн* ‘холощенный бык’, *атан* ‘верблюд-мерин’, *ирик*, *бурїк*, *бурма* ‘холощенный козел’. То же можно сказать и о границах самостоятельного лексического обозначения разных возрастных групп. Важную роль при отборе слов и их специализации в качестве возрастных наименований у тюркских народов играют, также, внешние признаки животных, обязательные для определенного периода времени и оцениваемые с хозяйственной точки зрения, например: *башкир. башмак* ‘годовалый теленок, у которого уже отросли копыта’.

Khachatryan Lusine

THE NAMES OF DOMESTIC ANIMALS IN TURKIC LANGUAGES

A thesis for PhD degree in Philology

Speciality 10.02.06, The Ancient and Modern Languages of Asia (Turkic languages).

The defence will be held at the address: 0015 Yerevan, Grigor Lusavorich Str. Institute of Language after Hrachia Acharian. at the session of the Specialized Council on Linguistics N 019 HEC, on September 23, 15. 00, 2013.

SUMMARY

This dissertation covers the synchronic and diachronic research of the names of domestic animals in Turkic languages. The semantic-morphological study of certain lexemes of this thematic group embracing either ancient level of the vocabulary or innovations of later period, allows us to retrace of internal regularities of the development of Turkic languages that have passed the interesting way of interaction among themselves and with other language families.

Different layers of the vocabulary are studied unevenly in modern Turkic studies. The cattle-breeding vocabulary in comparison with other linguistic categories remains little-studied and does not receive systematic structural-semantic analysis.

In Introduction the object of the research is defined and the importance of subject as well as raised problems and issues are substantiated. The detailed critical analysis of the scientific literature on the subject is given.

The **First Chapter** covers the investigation of domestic animals' names that are attested in the written sources of Old and Karakhan Turkic. The majority of these names had common Turkic character that most probably reflects the unity of Turkic languages and dialects in ancient period when the cattle-breeding terminology was formed. It's worth mentioning that the correlation of different denominations included in tlumatie groups of general type names, names of castrated stallion, productive male, female or of young animals are not the same. The mentioned above denominations can have different or the same roots, moreover in the latter case limitation is made with the help of morphology or by the means of description. In ancient manuscript monuments the names of horses according to their age or sex are dominated. For example айғыр-stallion, байтал-mare, рай-foal, but in the written materials of Karakhan period the names of animals are mentioned which have an important meaning in farming: быка (stalling bull), сiғiр (cow), бузарi (calf), ицән (female camel), бота (colt) etc. The names of horses by age and sex prevail in the oldest written monuments.

In the **Second Chapter** the detailed analysis of names of domestic animals in the medieval period is provided. The differences among Oguz-Turkmen, Kipchak and Karluk languages are clearly elicited in this period. This is also evident in the examined thematic

group of vocabulary. However, the characteristic lexemes of different Turkic dialects still exist simultaneously in some written monuments. For example the animal names testified in the vocabulary *Kitab-ı Mecmû-i Tercüman-ı Türki-i ve Acemi ve Mogolî* reflects phonetic differences of the Kipchak language, for example ` keşek «two year old camel's culf երկու տարեկան ուղտի ձագ» (compare with oghuz dialectical köşek “camel's culf”, mamluk Kipchak “one year or six months old camel's culf, «ուղտի ձագ», մամլուքյան դիշդ. köşek/keşek «մեկ տարեկան կամ վեց ամսական ուղտի ձագ»): հմմտ.՝ օղուգ. բրբռ.՝ köşek «ուղտի ձագ», մամլուքյան դիշդ. köşek/keşek «մեկ տարեկան կամ վեց ամսական ուղտի ձագ»): The semantic changes in the meaning of different words are apparent in the medieval period. For example old Turkic name “*neat cattle ud/uy*” testified in the early monuments is mentioned in the phonetic variant *ud<uŷ and in the mean of bull and ox*. During different periods there was a process of changing of Һ>Н, Һ>Ј, Ј>Ч in Turkic languages. This helps to explain the formation of following names (коч/кой/коч/койун/гойун). Although there are some adoptions in the early medieval period, the majority of the testified names are Turkic. However in the late medieval period when as a result of the historical and cultural changes Arabic and Persian impact increased the loanwords from Arabic and Persian languages in the Turkic vocabulary increased as well.

The **Third Chapter** covers the historic-semantic description of certain animal names. There are numerous terms defining different kinds of animals by sex, age and other criteria in the Turkic languages. Some groups of words are distinguished by their degree of prevalence. The stability or instability of the common meaning of certain lexeme as well as that of given lexical-semantic groups is closely tied with the historical and social life conditions of the native speakers of these languages. The names of Turkish origin composed the majority of the names of this vocabulary group. It's to be mentioned that some terms used in the early or medieval monuments are preserved until now. The lexicological structure and the way of wordmaking indicate that they are innovations. In etymological examination we made an attempt to define how the Old Turkic layer is preserved in the modern Turkic languages, spheres and extent of loanwords use.

In the conclusion of the dissertation the generalizations are made and the results of the work are summarized. The age characteristics' of animals' in Turkic names is distinguished by specificity, it has many concrete peculiarities and is being observed up to ancient times. In Turkic languages the whole distinction of animal names is carried out by syntax, lexicological and morphological means. For expressing the age characteristic of animals names by syntax mean, there is used a description method. For example in the materials of manuscript monuments the following can be met: üç yaşar qoi – a three year old sheep, tort yaşar qoi – a four year old sheep, beş yaşar qoi – a five year old sheep. The names generally concerning to those borrowed from Persian language (attributive numerals) are more typical to modern Turkic languages: пәнджъ – five year old sheep, чоръ – four year old sheep, чары – a tow year old sheep. The same from Mongolian for limited group of domestic animals: дөнөн – three or four year old horse, дөнөжин three or four year old filly. Only the most important domestic animals in the sense of farming have independent lexicological denomination of castrated male: ахта, ігдіш, алаша –

castrated horse, оғуз, чар, тазін - castrated bull, атан - castrated camel, ирик, бурік, бурма castrated goat. The same can be said about the borders of independent lexicological meanings of different age groups. For Turkic nations the outward looks of animals that are necessary. For a certain period of time and valued in a sense of farming, also play an important role in choosing and specializing the words as age denominations.